

դեռ իրենց վերջին խօսքը չէին ասել աշխարհին:

Եւ ասացին մեծ պատերազմի ընթացքին... Մէկ միլիոն հայ իր հայրենիքի մոխիրներէ մէջ թաղուեց:

Մեր ազնիւ ու առաքինի ցեղը շատ թանկ վճարեց 1908-ի իր հաւատի համար դէպի թիւրքի ազատամտութիւնն ու արդարութիւնը:

Այն ժամանակից յետոյ աշխարհը փոթորկուեց եւ թիւրքիան հիմն ի վեր եղաւ:

Ահմէդ-Րիզան, Երիւս. Թիւրքիոյ տեսաբան չէֆը փախտական է իր հայրենիքից: Իր աշակերտները — Բահաէդդին Շաքիր, Թէլաւաթ, դոկտոր Նազիմ, Էնվէր, Ազմի, Ճէմալ եւ ուրիշները, ամբողջ այդ ջարդարար հրէշները կամ վրէժխնդիր արդարութեան զնդակներէ ընկան, կամ կախաղան բարձրացան իրենց իսկ ընկերակից քեմալիստների ձեռքով¹⁾:

Պատմութիւնը երբեմն ահաբեկու դատաստան ունի:

* * *

Ես դիտմամբ երկար կանգ առայ 1908-ի թիւրք Սահմանադրութեան եւ նրա հետեւանքների վրայ, որովհետեւ ըստ իս այնտեղ է բացատրութիւնը քեմալիզմի:

Ի՞նչ էր Սահմանադրութեան շրջանը.—

Արիւնլուայ Հայաստան. աշխարհում հակիրճորէ ու ցասումն թրքութեան եւ իր վարչութեան դէմ. հռչակում է Սահմանադրութիւնը. չողջողուն այս ցուցանակի առջեւ դըրսում դադարում են բողոքի ցոյցերը, ներսում

1) Ահմէդ-Րիզային վերջին անգամ հանդիպեցի Կ. Պոլսում 1918 թուին, յունիսին, երբ եկած էի իրր պատուիրակ նորակազմ մեր կառավարութեան. Իթթիհատի ծերունի չէֆը ընկճուած էր եւ յուսարեկ թէ՛ իր աշակերտներէց եւ թէ՛ իր հայրենիքից: Եւ մեր ունեցած երկար զրոյցի ընթացքին չի վարանեց «արիւնարբու մարդասպաններ» անուանել հայ ժողովրդի դահիճներին, իր իսկ հետեւողներին: Հարկ է աւելցնել, որ ի պատիւ իրեն նա միակն եղաւ, որ ժամանակին բողոքեց հայկական սարսափների դէմ: Ա. Ա.

վերաւոր ու արիւնաքամ զոհերը աչքերը բաց անում եւ թարթում յոյսին:

Եւ սակայն անմիջապէս յետոյ բարբարոսութիւնը ծածկող եւրոպականութեան կեղեւը պայթում է եւ արիւնարբու հրէշը ցցւում է դուրս իր իսկական կերպարանքով նախ Կիլիկիայում, ապա ամբողջ Հայաստանում:

Քեմալիզմը այս վայրագ ու վանիչ պատմութեան կրկնութիւնը չէ՞ արդեօք:

Իւրաքանչիւր ժողովուրդ իր քաղաքակրթութեան ճամբին անսահման լինելութեան մի անսպառ շաղախ է. մշակոյթը ազգերի հոգեւոր ճիւղերի, ստեղծագործական ծածուկ ու հզօր կարելիութիւնների թանձրացումն է: Արդ՝ այդ շաղախը մերթ դերազանցապէս ազնիւ է ու խորհրդաւոր ձեւերով հարուստ. մերթ միջակ է, եւ մերթ իսպառ անպէտք:

Ի՞նչ յատկութիւն ունի թիւրք ցեղային ատաղձը, որով քեմալիզմը վայրագօրէն փորձում է մի նոր ազգ զանդել, ինչպէս բրուար ցեխի շաղախից՝ աման:

Անապատներից եկած՝ եւ անապատն իր հոգում, թիւրքը տակաւին չի կարողացաւ իր աւերիչ ու դաժան խառնուածքը յարմարցնել իր նոր միջավայրին, ուր աշխարհի ամենափայլուն եւ ամենամիտ քաղաքակրթութիւնն է ծաղկել:

Բռնի ոյժով մարդ կը դառնա՞յ արդեօք թիւրքը. արիւն ու աւերի փոխարէն քաղաքակրթութեան եւ մշակոյթի ճամբան կը մեռնի՞ երբ եւ իցէ:

Չգիտեմ, դատապարտուած ցեղ չկայ աշխարհում. բայց թիւրքը...

Չգիտեմ, չգիտեմ:

Թող այս մասին Ա. Մանգելշտամը խօսի, միջազգային իրաւունքի քաջամուտ ու արդարամիտ մասնագէտը, Արեւելքի հոգեարնութեան վարպետը, որ տասնեակ տարիներ Կ. Պոլսում մօտիկից ուսումնասիրել է թիւրք վարք ու բարքը, նրա դալարուն ու վտանգաւոր հոգեկան կառուցուածքը:

«Այս «իշխող» ցեղի դերը, ասում է Մանգելշտամ, մեզ թւում է նախ եւ առաջ ողբերգական: Եւ քիւրժ ժողովրդի այս ողբերգութիւնը նրա մէջ է, որ աշխարհում երեւան գալուց ի վեր նա ոչինչ չի արել քաղաքակրթա-